ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2024 թվականի N 92-Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Մեծամոր համայքի ավագանու 6-րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի սեպտեմբերի 13-ը՝ ժամը 16:00-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՄՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2024 թվականի N 91-Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը՝

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Տալ համաձայնություն Մեծամոր համայնքի բնակավայրերում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցութային եղանակով վարձակալության իրավունքով տրամադրելու համար՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր
համայնքի ավագանու 2024 թվականի
հունիսի 14-ի N 91-Ա որոշման

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԵՐ

Հ/Հ	Հողամասի գտնվելու վայրը, հասցե	Հողամասի ծածկագիր	հողամասի մակերես /հա/	հողամասի նպատակային նշանակություն	հողամասի գործառնական նշանակություն	Հողամասի մեկնարկային վարձակալության գին/ՀՀ դրամ	Վարձակալության Պայմանագրի ժամկետը
1	Մեծամոր համայնք Երասխահուն բնակավայր	04-040-0203-0004	4,9266	գյուղատնտեսական	Այլ հողատեսք	500.000	20 տարի

Աշխատակազմի քարտուղար՝ Մարատ Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2024 թվականի N 90-Ա

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով 57-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով «ՎԻ ԷՄ ԱՐ ՓԻ» ՍՊԸ-ի կողմից իրականացված՝ 2023 թվականի հունիսի 10-ի անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման արդյունքները, ինչպես նաև Մեծամոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, համայնքի ղեկավարի պարտականությունները կատարողի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. 2024 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող Մեծամոր համայնքի Ալաշկերտ բնակավայրում գտնվող գ. Ալաշկերտ 1-ին փողոց 1/2 և 1/3 հասցեներում գտնվող անշարժ գույքը (136,7 և 71,1 քմ մակերեսներով վարչական շենքեր)՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՁԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր
համայնքի ավագանու 2024 թվականի
հունիսի 14-ի N 90-Ա որոշման

ՑԱՆԿ

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ

Հ/Հ	Գույքի անվանումը	Գտնվելու վայրը	Կադ ծածկագիր	Մակերեսը ք/մ	Գնահատման արժեքը (ՀՀ դրամ)	Մեկնարկային գինը (ՀՀ դրամ)
1	վարչական շենք	գ. Ալաշկերտ 1-ին փող թիվ 1/2	04-088-0026-0019-002-002	136,70	6 240 000	6 240 000
2	վարչական շենք	գ. Ալաշկերտ 1-ին փող թիվ 1/3	04-088-0026-0019-002-001	71,1	3 700 000	3 700 000

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2024 թվականի N 89-Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը՝

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. 2024 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր
համայնքի ավագանու 2024 թվականի
հունիսի 14-ի N 89-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

h/h	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի ծածկագիր	Հողամասի մակերես /հա/	Հողամասի նպատակային նշանակություն	Հողամասի գործառնական նշանակություն	Հողամասի մեկնարկային գին /ՀՀ դրամ/
1	Մեծամոր համայնք Տանձուտ բնակավայր 18-րդ փ. 12 հողամաս	04-092-0032-0085	0,068	Բնակավայրերի	Այլ հողեր	550.000
2	Մեծամոր համայնք Տանձուտ բնակավայր 18-րդ փ. 10	04-092-0032-0056	0,0142	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	Գյուղատնտեսական արտադրական	150.000
3	Մեծամոր համայնք Ակնալիճ բնակավայր	04-004-0170-0009	0,4323	Գյուղատնտեսական	Վարելահող	2.000.000
4	Մեծամոր համայնք Տանձուտ բնակավայր	04-092-0032-0084	0,07645	Գյուղատնտեսական	Վարելահող	200.000
5	Մեծամոր համայնք Բամբակաշատ բնակավայր	04-031-0903-0002	0,14774	Գյուղատնտեսական	Այլ հողատեսք	100.000

6	Մեծամոր համայնք Տանձուտ բնակավայր 8-րդ փ. 2-րդ նրբանցք 17 հողամաս	04-092-0071-0077	0,12	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	1.000.000
7	~~Ք. Մեծամոր 1-ին թ.~~ 3/5 հողամաս	04-003-0050-0406	0,03913	Բնակավայրերի	Խառը կառուցապատման	1.200.000
8	Ք. Մեծամոր 3-րդ թ. 12	04-003-0006-0036	0,08653	Բնակավայրերի	Այլ հողեր	2.600.000
9	Ք. Մեծամոր 4-րդ թ. 4/50 հողամաս	04-003-0056-0052	0,01512	Բնակավայրերի	Այլ հողեր	700.000
10	Ք. Մեծամոր 1-ին թ. 40/4 հողամաս	04-003-0033-0174	0,0055	Բնակավայրերի	Խառը կառուցապատման	300.000

Աշխատակազմի քարտուղար՝ Մարատ Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2024 թվականի N 88-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 206-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1- ին կետով, և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 206-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Եկամտային մասով.

ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներին /սուբվենցիաներ/ ավելացնել 200651.4 հազար ՀՀ դրամով,

բ) Այլ եկամուտներ տողն ավելացնել 617.9 հազար ՀՀ դրամով (տող 1393):

2. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 63239.0 հազար դրամ հատկացնել ֆոնդային բյուջե:

3. Ծախսային մասով.

1) 01-1-1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ) նախահաշվի

4212 (Էներգետիկ ծառայություններ) հոդվածին ավելացնել 10000.0 հազար ՀՀ դրամ,

4252 (Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածին ավելացնել 3000.0 հազար ՀՀ դրամ,

4264 (Տրանսպորտային նյութեր) հոդվածին ավելացնել 6000.0 հազար ՀՀ դրամ,

5121 (Տրանսպորտային սարքավորումներ) հոդվածին ավելացնել 14190,0 հազար ՀՀ դրամ:

2) 01-6-1 (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) նախահաշվի

4216 (Գույքի և սարքավորումների վարձակալություն) հոդվածին ավելացնել 980.0 հազար ՀՀ դրամ,

4241 (Մասնագիտական ծառայություններ) հոդվածին ավելացնել 5000.0 հազար ՀՀ դրամ,

4823 (Պարտադիր վճարներ) հոդվածին ավելացնել 2000.0 հազար ՀՀ դրամ:

3) 04-5-1 (Ճանապարհային տրանսպորտ) նախահաշվի

5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին ավելացնել 32998.0 հազար ՀՀ դրամ,

5134 (Նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին ավելացնել 3634.0 հազար ՀՀ դրամ:

4) 05-1-1 (Աղբահանում) նախահաշվի

4216 (Գույքի և սարքավորումների վարձակալություն) հոդվածին ավելացնել 40.0 հազար ՀՀ դրամ:

5) 06-1-1 (Բնակարանային շինարարություն) նախահաշվի

5134 (Նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին ավելացնել 7850.0 հազար ՀՀ դրամ:

6)06-3-1 (Ջրամատակարարում) նախահաշվի

4212 (Էներգետիկ ծառայություններ) հոդվածից պակասեցնել 45020.0 հազար ՀՀ դրամ,

5134 (Նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին ավելացնել 2495.0 հազար ՀՀ դրամ:

7) 07-3-1 (Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ) նախահաշվի

4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին ավելացնել 2000.0 հազար ՀՀ դրամ:

8) 08-2-3 (Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ) նախահաշվի

4212 (Էներգետիկ ծառայություններ) հոդվածին ավելացնել 6000.0 հազար ՀՀ դրամ,

5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին ավելացնել 34100.0 հազար ՀՀ դրամ:

9) 09-1-1 (նախադպրոցական կրթություն) նախահաշվի

5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին ավելացնել 168623.4 հազար ՀՀ դրամ:

10) 09-5-1 (Արտադպրոցական դաստիարակություն) նախահաշվի

4511 (Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին) հոդվածին ավելացնել 10000.0 հազար ՀՀ դրամ,

4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին ավելացնել 617.9 հազար ՀՀ դրամ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2024 թվականի N 87-Ա

«ՍԻՆԵՄԱ ԹԱՈՒՆ» ՍՊԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ, 686-րդ և 687-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, համայնքի ղեկավարի պարտականությունները կատարողի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի 3-րդ թաղաաս, 14/1 հասցեում գտնվող համայնքի սեփականությունը հանդիսացող 1,0898 հա հողամասի վրա կառուցված 8940,97քմ մակերեսով ջրավազանը (կադ. ծածկագիր՝ 04-003-0006-0034-001, սեփ. վկայական N 07062024-04-0093) անհատույց օգտագործման իրավունքով 10 տարի ժամկետով տրամադրել «Սինեմա Թաուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ նկարահանման հրապարակ կառուցելու համար:

2. «Սինեմա Թաուն» ՍՊԸ-ի հետ կնքել տարածքի անհատույց օգտագործման իրավունքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման և պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՆՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2024 թվականի N 86–Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-699-րդ հոդվածներով, և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, համայնքի ղեկավարի պարտականությունները կատարողի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Մեծամոր համայնքի սեփականությունը հանդիսացող Ակնալիճ բնակավայրի Նաիրյան թաղամասում և Գրիգոր Լուսավորիչ փողոցում տեղակայված (սեփ. վկայական N 23112023-04-0061), Ջանֆիդա բնակավայրում տեղակայված (սեփ. վկայական N 25102023-04-0064) և Գետաշեն բնակավայրում տեղակայված (սեփ. վկայական N 06022024-04-0046) գազատար խողովակաշարերն անհատույց օգտագործման իրավունքով 5 (հինգ) տարի ժամկետով տրամադրել «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին՝ շահագործելու նպատակով:

2. Մեծամոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող Էդգար Հովհաննիսյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի հետ կնքել անշարժ գույքն անհատույց օգտագործման տրամադրելու պայմանագրեր, որոնց նոտարական վավերացման և պետական գրանցման ծախսերը կրում է «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՄՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2024 թվականի N 85-Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԻ 04-072-0650-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՓՈՂՈՑՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Աշխարհագրական անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով, 6-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նոր Արտագերս գուղի 04-072-0650-0001 կադաստրային ծածկագրով փողոցն անվանակոչել որպես «Մեծամոր համայնք, գյուղ Նոր Արտագերս, 19-րդ փողոց, 4-րդ նրբանցք»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2024 թվականի N 84-Ա

0,6 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի N 73-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով և հիմք ընդունելով «ԷԼԻՏ ՀԻԼԶ» ՍՊԸ-ի դիմումը ինչպես նաև Մեծամոր համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Մեծամոր համայնքի Բամբակաշատ բնակավայրում «ԷԼԻՏ ՀԻԼԶ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0,6 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,41 հավարելահող և 0,19 հա խաղողի այգի գործառնական նշանակության հողամասի (սեփ. վկայական N 22022024-04-0071, ծածկագիր 04-031-0229-0004) նպատակային և գործառնական նշանակությունները փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության և գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության հողամասի:

2 . Փոփոխված 0,6 հա հողամասը արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում :

3.Ուժը կորցրած ճանաչել Մեծամոր համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 17-ի «0,6 հա հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին» N 73-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2024 թվականի N 83-Ա

0,1699 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի N 54-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 22-ի N 042 որոշումը, քաղաքացի Վանուշ Կառլենի Խաչատրյանի դիմումը, ինչպես նաև Մեծամոր համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրում Վանուշ Կառլենի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող 0,24 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության հողամասից (սեփ. վկայական N 1972283, ծածկագիր 04-067-151-001) 0,1699 հա հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակության հողամասի:

2. Փոփոխված 0,1699 հա հողամասն արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3. Ուժը կորցրած ճանաչել Մեծամոր համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 19-ի «0,1699 հա հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին» N 54-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2024 թվականի N 82-Ա

.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 195-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3.Առաջարկել Մեծամոր համայնքի ղեկավարին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

4.ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 16-ի «2024 թվականի

համար Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 195-Ա որոշումը:

5.Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հավելված N 1
ՀՀ Արմավիրի մարզի
Մեծամոր համայնքի ավագանու
2024 թվականի հունիսի 14-ի
N 82-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Քաղաքաշինության և հողաշինության բաժին
2. Գյուղատնտեսություն և բնապահպանության բաժին
3. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժին
4. Եկամուտների հաշվառման և հավաքագրման,ծրագրերի կազմման և համակարգման բաժին
5. Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի,սպասարկման և գովազդի բաժին
6. Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին
7. Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին
8. Իրավաբանական բաժին
9. Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին
10. Կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժին

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հովհաննիսյան

Հավելված N2
ՀՀ Արմավիրի մարզի
Մեծամոր համայնքի ավագանու
2024 թվականի հունիսի 14-ի
N 82-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 290

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ	Աշխատավարձի չափը
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1	Համայնքի ղեկավար	1	710000	0	710000
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	570000	0	570000
3-4	Համայնքի ղեկավարի տեղակալ	2	550000	0	1100000
	Ընդամենը	4	1830000	0	2380000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
5-7	Համայնքի ղեկավարի խորհրդական	3	400000	0	1200000
8	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար	1	320000	0	320000
9-10	Համայնքի ղեկավարի օգնական	2	300000	0	600000
11-12	Համայնքի ղեկավարի տեղակալի օգնական	2	300000	0	600000
13-14	Խմբակցության փորձագետ	2	200000	0	400000
	Ընդամենը	10	1520000	0	3120000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
15-16	Մինչև 1000 բնակիչ ունեցող վարչական տարածքների ղեկավարներ	2	320000	0	640000
17-28	1001-2000 բնակիչ ունեցող վարչական տարածքների ղեկավարներ	12	340000	0	4080000
27-37	2001-3000 բնակիչ ունեցող վարչական տարածքների ղեկավարներ	9	360000	0	3240000
38-42	3001-4000 բնակիչ ունեցող վարչական տարածքների ղեկավարներ	5	380000	0	1900000

43-44	4001 և ավելի բնակիչ ունեցող վարչական տարածքների ղեկավարներ	2	400000	0	800000
	Ընդամենը	30	1800000	0	10660000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
45	Աշխատակազմի քարտուղար	1	560000	0	560000
	Քաղաքաշինության և հողաշինության բաժին				
46	Բաժնի պետ	1	350000	0	350000
47	Գլխավոր մասնագետ-ճարտարապետ	1	260000	0	260000
48	Գլխավոր մասնագետ-հողաշինարար	1	260000	0	260000
49-52	Առաջատար մասնագետ	4	202000	0	808000
53-64	Առաջին կարգի մասնագետ	12	163600	0	1963200
65	Երկրորդ կարգի մասնագետ	1	132880	0	132880
	Ընդամենը	20	1368480	0	3774080
	Գյուղատնտեսություն և բնապահպանության բաժին				
66	Բաժնի պետ	1	350000	0	350000
67	Գլխավոր մասնագետ	1	260000	0	260000
68-72	Առաջատար մասնագետ	5	202000	0	1010000
73-84	Առաջին կարգի մասնագետ	12	163600	0	1963200
85	Երկրորդ կարգի մասնագետ	1	132880	0	132880
	Ընդամենը	20	1108480	0	3716080
	Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժին				
86	Բաժնի պետ	1	350000	0	350000
87	Գլխավոր մասնագետ-հաշվապահ	1	260000	0	260000
88-89	Գլխավոր մասնագետ	2	260000	0	520000
90-91	Առաջատար մասնագետ	2	202000	0	404000
92-93	Առաջին կարգի մասնագետ	2	163600	0	327200
	Ընդամենը	8	1235600	0	1861200
	Եկամուտների հաշվառման և հավաքագրման,ծրագրերի կազմման և համակարգման բաժին				
94	Բաժնի պետ	1	350000	0	350000
95	Գլխավոր մասնագետ	1	260000	0	260000
96-127	Առաջատար մասնագետ	32	202000	0	6464000
128-130	Առաջին կարգի մասնագետ	3	163600	0	490800
	Ընդամենը	37	975600		7564800

Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի,սպասարկման և գովազդի բաժին

131	Բաժնի պետ	1	350000	0	350000
132	Գլխավոր մասնագետ	1	260000	0	260000
133-134	Առաջատար մասնագետ	2	202000	0	404000
135-141	Առաջին կարգի մասնագետ	7	163600	0	1145200
142	Երկրորդ կարգի մասնագետ	1	132880	0	132880
	Ընդամենը	12	1108480	0	2292080

Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին

143	Բաժնի պետ	1	350000	0	350000
144-145	Գլխավոր մասնագետ	2	260000	0	520000
146-148	Առաջատար մասնագետ	3	202000	0	606000
149-154	Առաջին կարգի մասնագետ	6	163600	0	981600
	Ընդամենը	12	975600	0	2457600

Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին

155	Բաժնի պետ	1	350000	0	350000
156-157	Գլխավոր մասնագետ	2	260000	0	520000
158-159	Առաջատար մասնագետ	2	202000	0	404000
160-166	Առաջին կարգի մասնագետ	7	163600	0	1145200
167-168	Երկրորդ կարգի մասնագետ	2	132880	0	265760
	Ընդամենը	14	1108480		2684960

Իրավաբանական բաժին

169	Բաժնի պետ	1	350000	0	350000
170	Գլխավոր մասնագետ-իրավաբան	1	260000	0	260000
171-172	Առաջատար մասնագետ	2	202000	0	404000
173	Առաջին կարգի մասնագետ	1	163600	0	163600
	Ընդամենը	5	975600	0	1177600

Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին

174	Բաժնի պետ	1	350000	0	350000
175	Գլխավոր մասնագետ	1	260000	0	260000
176-177	Առաջատար մասնագետ	2	202000	0	404000
178-180	Առաջին կարգի մասնագետ	3	163600	0	490800
	Ընդամենը	7	975600	0	1504800

	Կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժին				
181	Բաժնի պետ	1	350000	0	350000
182	Գլխավոր մասնագետ	1	260000	0	260000
183-184	Առաջատար մասնագետ	2	202000	0	404000
185	Առաջին կարգի մասնագետ	1	163600	0	163600
	Ընդամենը	5	975600	0	1177600
	Աշխատակազմ (կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ)				
186-190	Գլխավոր մասնագետ	5	260000	0	1300000
191-193	Առաջատար մասնագետ	3	202000	0	606000
	Ընդամենը	8	462000	0	1906000
	Ընդամենը համայնքային ծառայող	149	11829520	0	30676800
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
194-225	Հավաքարար	32	120000	0	
226-238	Պահակ	13	120000	0	1560000
239-265	Գործավար	27	120000	0	3240000
266-267	Վարորդ	2	190000	0	380000
268	Տնտեսվար	1	155000	0	155000
269	Մեդիա օպերատոր	1	274000	0	274000
	Ընդամենը	76	979000	0	9449000
	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
270-289	Անասնաբույժ	20	120000	0	2400000
290	Ցանցային ադմինիստրատոր	1	150000	0	150000
	Ընդամենը	21	270000	0	2550000
	ԸՆԴԱՄԵՆԸ աշխատակազմ	290	18228520	0	58835800

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2024 թվականի N 81-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով, 245-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1213-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնությունների տրամադրման փաստաթղթերի ուսումնասիրման հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 6-ի թիվ 7 արձանագրությունը, ինչպես նաև Մեծամոր համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի բնակիչներին սեփականության իրավունքով պատկանող գույքի մասով սահմանել անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ՝ համաձայն N 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված N1
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2024 թվականի հունիսի 14-ի
N 81-Ա որոշման

ՑԱՆԿ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

հ/հ	Ազգանուն Անուն	ՀԾՀ	Հաշվառման հասցե	Փոխադրամիջոցի մակնիշը , պետհամարանիշը	Հարկի նվազեցման չափը/դրամ/	Նախաձեռնությունը
1	Արտեմ Ենոքյան	3502700273	ՀՀ Արմավիրի մարզ Արևիկ բնակավայր 5փ 2տ	AUDI A4	52018/հիսուներկու հազար տասնութ/	հանձնաժողով

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հովհաննիսյան

Հավելված N 2
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2024 թվականի հունիսի 14-ի
N 81-Ա որոշման

ՑԱՆԿ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

h/h	Ազգանուն Անուն	ՀԾՀ	Անշարժ գույքի գրանցման հասցե	Անշարժ գույքի կադաստրային ծածկագիր	Հարկի նվազեցման չափը/դրամ/	Նախաձեռնությունը
1	Վոլոդյա Երեմյան		ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Տանձուտ բնակավայր	04-092-0020-0012	17044/տասնյոթ հազար քառասունչորս/	հանձնաժողով
2	Վոլոդյա Երեմյան		ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Տանձուտ բնակավայր	04-092-0082-0005	31452/երեսունմեկ հազար չորս հարյուր հիսուներկու/	հանձնաժողով
3	Երազիկ Հովհաննիսյան	6511640035	ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Նալբանդյան բնակավայր	04-070-0239-0004	44848/քառասունչորս հազար ութ հարյուր քառասունութ/	հանձնաժողով
4	Վարազդատ Ավետիսյան	1115293354	ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Տանձուտ բնակավայր	04-093-0088-0013	10115/տասը հազար հարյուր տասնհինգ	հանձնաժողով
5	Վարազդատ Ավետիսյան	1115293354	ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Տանձուտ բնակավայր	04-093-0023-0008	15214/տասնհինգ հազար երկու հարյուր տասնչորս/	հանձնաժողով

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2024 թվականի N 80-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-րդ հոդվածի պահանջներով՝ և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝

1) Եկամուտները և ծախսային քաղաքականությունը շարադրող մասեր՝ համաձայն N1 հավելվածի.

2) Վարչական և ֆոնդային մասերի եկամուտներ, ըստ ձևավորման աղբյուրների՝ համաձայն N2 հավելվածի.

3) Պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն N3 հավելվածի.

4) Վարչական և ֆոնդային մասերի տարեկան հատկացումներն՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի և տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ համաձայն N4 հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են արդեն միջնաժամկետ (ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով) կանխատեսումների

համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն ըստ գործառնական ոլորտների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Մեծամորի համայնքապետարան

Մեծամոր համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիր

Հավելված 1
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր
համայնքի ավագանու 2024 թվականի
հունիսի 14-ի N 80-Ա որոշման

Մեծամոր համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի եկամուտները և ծախսային քաղաքականությունը շարադրող մասեր

Բովանդակություն

1. Ներածություն----------3
2. Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները----------4
3. Մեծամոր համայնքի 2025-2027թթ. կանխատեսվող եկամուտները-------5
4. Եկամուտների վերծանումն ըստ առանձին տեսակների----------7
5. Մեծամոր համայնքի 2025-2027թթ. կանխատեսվող ծախսերը----------8
6. Բյուջետային ծախսերի կանխատեսումը ----------8

Ներածություն

Մեծամոր համայնքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) հանդիսանում է Մեծամոր համայնքի զարգացման հեռանկարի թվային արտացոլումը և համայնքի միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը, որը և հանդիսանում ելակետ՝ նախագծելու համապատասխան տարվան հաջորդող տարեկան բյուջեն:

ՄԺԾԾ-ով ներկայացվում է Մեծամոր համայնքի կանխատեսվող 3 տարիների եկամուտները, դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, ծախսային ուղղությունները ըստ ոլորտների, որոնք բերելու են Մեծամոր համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև կընձեռնեն համայնքին առավել արդյունավետ գեներացնել եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որն իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը:

ՄԺԾԾ-ն կնպաստի ավելի լայն և հեռանկարային ծախսերի քաղաքականության մշակմանը, որի շնորհիվ համայնքի զարգացման հեռանկարը կստանա բյուջետային ձևաչափ և որն ըստ էության հասանելի կդարձնի բոլորին՝ այդ թվում քաղաքացիներին, ուսումնասիրելու միջնաժամկետ կտրվածքով համայնքի կողմից նախատեսվող ծախսերի բաշխումը ըստ ոլորտների՝ թվային տեսքով, ընդ որում սույն ֆինանսական փաստաթղթով առավել կընդգծվի բյուջետային ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմները:

Մեծամոր համայնքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը նախագծվել է ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով:

Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները

Մեծամոր համայնքի 2025-2027թթ. համար նախանշված ծրագրերի իրականացումը խարսխվելու է համաչափ և կայուն զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
2. Հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Համայնքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և քվեարկությունների միջոցով:
5. Իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի ձևավորումը:
6. Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծումը:
7. Աղբահանության կազմակերպման և կարգավորման, նոր աղբավայրի և աղբի վերամշակման գործարանի ստեղծման մեկնարկի ապահովումը:
8. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
9. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանումը:
10. Համայնքային ենթակայության առողջապահական հիմնարկների սպասարկման որակի բարելավման մեխանիզմների ներդրումը, ինչպես դրանց հիմնանորոգումը և ժամանակակից ստանդարտներին հասցնելը:
11. Նախադպրոցական հաստատությունների և դպրոցների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովումը:
12. Նախադպրոցական և արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգումը:
13. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովումը:


14. Համայնքում գազաֆիկացման աշխատանքերի իրականացումը:
15. Համայնքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցում և վերանորոգում:
16. Համայնքի տարբեր միջազգային ծրագրերին և միություններին մասնակցության ապահովումը, ինչպես նաև արտաքին հարաբերությունների հաստատումը:
17. Մեծամոր համայնքում ճանապարհաշինարարական լայնածավալ ծրագրերի շարունակականության ապահովումը:
18. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը:
19. Շենքերի և բակային տարածքների բարեկարգումն ու բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովումը:
20. Բնակելի ֆոնդի վերանորոգումն և պահպանումը, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման շարունակականության ապահովումը:
21. Հանգստի գոտիների ստեղծումը, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացումը:
22. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովումը:
23. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

Մեծամորի համայնքնի 2025-2027թ. կանխատեսվող եկամուտները


